

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար


Վ. Գաբրիելյան

B. hakhchyan 2013p

Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական
եկամուտների երմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան


Գ. Խաչատրյան
2013p

N

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՀԱՐԿՎՈՂ ԾԱՆՈՒՅԹԸ ՈՐՈՇԵԼԻՄ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1) «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (30 սեպտեմբերի 1997 թվական, ՀՕ-155, այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով, ընդ որում՝ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «ժը» կետին համապատասխան հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված ծախսերը դասվում են ծախսերի թվին և նվազեցվում են համախառն եկամտից: Նույն հոդվածի 3-րդ մասին համապատասխան ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռքբերման (և համապատասխան դեպքերում՝ այլ հարկատուների եկամուտներին վերաբերող) փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ կառավարության 25.08.1998թ. N 525 որոշմամբ հաստատված «Նյութական ու ոչ նյութական ակտիվների, ծառայությունների (աշխատանքների) ձեռքբերման ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջների սահմանման և այդ փաստաթղթերի կազմման» կարգի 2-րդ բաժնով սահմանվում են ծախսերը հիմնավորող հաշվարկային փաստաթղթերին ներկայացվող պահանջների առանձնահատուկ դեպքերը, երբ որոշ վավերապայմաններ հաշվարկային փաստաթղթում արտացոլված չլինելու ժամանակ կարգի պահանջները համարվում են բավարարված, այն են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կողմերի միջև կնքված գրավոր պայմանագիր՝ որում արտացոլված են այդ վավերապայմանները, հաշվարկային փաստաթղթում առկա հատուցման ենթակա ընդհանուր գումարը, հղում պայմանագրի ամսաթվին և այլն:

2) Օրենքի 32-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան հարկատուի գործունեության հետ կապված խորհրդատվական ծառայությունների ստացման հետ

կապված ծախսերը համախառն եկամտից նվազեցվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

Խնդրո առարկա հարցը վերաբերվում է ՀՀ կառավարության երաշխիքների ներքո՝ ՀՀ կառավարության և Միջազգային Համագործակցության Ճապոնական բանկի միջև 18.02.1999թ. կնքված «Չարգացման պաշտոնական աջակցության փոխառություն N ARM-P1» համաձայնագրի պայմաններին, ծավալներին, գնումների ընթացակարգերին համապատասխան «Էլեկտրակահաղորդման և բաշխիչ համակարգեր» ծրագրի իրականացման նպատակով ՀՀ կառավարության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) միջև 09.07.2004թ. կնքված «Օժանդակ վարկի համաձայնագրի» շրջանակներում ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների մասով ընկերության համախառն եկամտից նվազեցմանը:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման» կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, **պարզաբանում եմ.**

Հաշվի առնելով, որ 2001-2008 թվականների ընթացքում ոչ ռեզիդենտ կազմակերպությունից ստացված խորհրդատվական ծառայությունների գծով «Էներգահինվեստ ԾԻԳ» պետական հիմնարկի կողմից դուրս գրված հաշվարկային փաստաթղթերը ընկերությունը ստացել է 2008 թվականին, ապա ընկերությունը վերոնշյալ հաշվարկային փաստաթղթի հիման վրա հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցումներ կարող է կատարել միայն հաշվարկային փաստաթուղթը ստանալուն նախարդող 3 տարիներին վերաբերող ծառայությունների մասով՝ որպես հաշվարկային փաստաթղթի ստացման տարվան նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված ծախսեր:

